## ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

# ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ և ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

## (Ստամբուլյան կոնվենցիա)

Ստամբուլյան կոնվենցիան պետություններից պահանջում է համապատասխան պաշտպանություն և աջակցություն ցուցաբերել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության զոհերին՝ **նրանց կարիքներն ու իրավունքները դնելով բոլոր ծառայությունների հիմքում:**

## Ի՞նչ է սա տալիս զոհերին.

Սոցիալական ծառայությունները, ոստիկանությունը, արդարադատության համակարգը, կանանց աջակցության ծառայությունները և զոհերին աջակցող ցանկացած այլ հաստատություն գիտակցում է այն բարդ տրավման, որ կանանց նկատմամբ բռնությունն ու ընտանեկան բռնությունը պատճառում են զոհերին:

Բռնության զոհերն ունեն հասանելիություն մասնագիտական աջակցության ծառայություններին՝ ճգնաժամային կենտրոններ, կանանց ապաստարաններ և խորհրդատվական կենտրոններ, ինչն ավելի հեշտ և արագ է դարձնում կանանց վերականգնման գործընթացն և ապահովում նրանց սոցիալական, տնտեսական և այլ հիմնարար իրավունքների պաշտպանությունը:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության զոհերին վերաբերվում են հարգանքով և կարեկցանքով, ինչը խիստ կարևոր է նրանց վերականգնումն ապահովելու համար և հեշտացնում է նրանց վերաինտեգրումը համայնքում՝ նպաստելով նրանց երկարաժամկետ հզորացմանը:

Վտանգի առկայության պարագայում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության զոհերն ունեն օպերատիվ արձագանքի, անվճար ու գաղտնի խորհրդատվության, հոգեբանական և իրավական աջակցության հասանելիություն:



Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության զոհերին հավելյալ տրավմաների չենթարկելու համար պետական մարմինները համագործակցում են վերջիններիս հետ՝ լսելով և հարգելով բռնության այս ձևերի վերաբերյալ նրանց գիտելիքներն ու անձնական փորձը:

Նյութը պատրաստվել և թարգմանվել է Եվրոպայի խորհրդի ֆինանսական աջակցությամբ: